«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 հուլիսի 2016 թվականի

«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում»** հարցը (զեկուցող՝ ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու Ս.Ս.Խաչատրյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. մարզաառողջարանում կատարվել են որոշակի վերանորոգման, վերականգնողական և բարեկարգման աշխատանքներ: Ձեռք են բերվել անհրաժեշտ հիգիենայի պարագաներ, հիմնովին վերանորոգվել է խոհանոցը և ձեռք է բերվել խոհանոցային գույք (գազօջախներ), ընթացիկ նորոգման են ենթարկվել մի քանի սենյակներ, բարեկարգվել է մարզաառողջարանի արտաքին լուսավորությունը, ավելացվել է 4 նոր լուսավորության կետ, կարգի են բերվել լողասենյակների հատվածները, հիմնովին վերանորոգվել են որոշ ջրագծեր: Մշակվել են մարզական և մշակութային, ինչպես նաև տուրիստական արշավներ կազմակերպելու ծրագրեր: Մարզաառողջարանը լիովին պատրաստ է հանգստացողներին ընդունելու համար: Ուղեգրերը վաճառվում են:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Խաչատրյանին՝
   1) մարզաառողջարանի գործունեության ամբողջ ընթացքում պատշաճ հսկողություն սահմանել իրականացվող աշխատանքների կատարման նկատմամբ.
   2) պրոֆեսորադասախոսական կազմի 10 անդամի տրամադրել անվճար ուղեգիր:

2. Մարզաառողջարանի պետ Հ.Կյոկչյանին և կառավարիչ Ա.Ալիխանյանին՝ հետևել մարզաառողջարանի ներքին կարգուկանոնին, ապահովել բնականոն համակեցության պայմաններ, կազմակերպել մարզական և մշակութային միջոցառումներ ու տուրիստական արշավներ՝ մշակված պլան-գրաֆիկներին համապատասխան:

3. Համալսարանի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Է.Ադամյանին՝ հետևել ճամբարի ֆինանսական գործունեությանը և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել մարզաառողջարանի ղեկավարությանը:

4. Ուսանողական խորհրդի նախագահ Ս.Խառատյանին՝ ուսանողության շրջանում իրականացնել հայրենասիրական և դաստիարակչական աշխատանքներ, բացառել ռեժիմի խախտումները, սահմանել հերթապահություն հանգստի ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Խաչատրյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

01.07.2016 թ.